զհրաշափառ տօն սուրբ Զատկի Յարութեան և ելեալ ի դուրս, որ էր օր ամսոյ Ապրիլի ԺԴ թվին ՌՂԹ Հայոց։

Ապրիլի ԺԸ Եշի ելաք յԵրուսաղէմէ, և մահտեսի հայր մեր բաժանեալ ի մէնջ գնայր ի Սուրբ Կարապետ, և մեր իջեալ ընդ մահտեսի մարբ մերով ուխտաւորօք[1]) յՌամլայ և Դ փոքր նաւ վարձեալ, որ ասի սումպէքի, ԻԲ Ապրիլի Բշի ելաք անտի ի ծով։ Գշի (23 Ապրիլ) երեկոյին ի Սայտայ ելաք և առաջի պահու գիշերոյն ելաք անտի, Եշի (25 Ապրիլ) երեկոյին հասաք ի Պերութ։ Եւ անտի ելեալ յետ պահու լինչ մօտ լուսոյ Եշի աւուրն՝ Շաբաթ (27 Ապրիլ) երեկոյին հասաք ի Տրապոլիս։ ԻԸ ամսոյ Կիրակի աւուր շրջեալ զտեղին և զքաղաք, որ ի բաց կայ ծովէ և երեկոյին ելեալ անտի նաւեցաք ի Կիպրոս Բշի աւուրս (29 Ապրիլ)։ Եւ ոչ գոլոյ աջողակ հողմոյ, փոքր փոքր առ եղերով կղզոյն երթայաք զշաբաթն ի բուն։ Եւ յառաւօտի Շաբաթու՝ Մայիսի Դ մեկնեցաք անտի, նաւէաք ի ծովն եւ ի նսեմանալ երեկոյին եղեւ մրրիկ հողմոյ մեծ և տատանէաք մեծ կոծով և երկիւղիւ ի մէջ փոքր նաւին, որ ահագնատեսիլ ունէր անհուն ծովն, միայն զինքն ցուցանելով իբրև զլերինս ի վերայ մեր, մերթ ի վերայ իւր առնելով բարձրանայաք և մերթ յանդունդս կարծէաք զմեզ գոլ. և միւս ընկերք այլ ոչ երևէին, զի կորուսաք զմիմեանս։ Սակայն գթածն և ողորմածն ոչ արար ըստ մեղաց մերոց, այլ փրկեաց ի մեծ վտանգէն և մերձ առ լոյսն խաղաղանայր սակաւ, և կէս աւուր Կիրակէիս (5 Մայիս) հազիւ արկաք յանծանօթ տեղի մի անբնակ և հանգեալ անդ ի ցաւոց և ի վշտաց մինչ երեկոյ, և ելեալ անտի առաւօտուն (6 Մայիս)՝ հասաք յԱտալիա[2]։

1) ըխտաւորօք. 2) յԱլայիայ.